

Քան զայս աւելի մանրամասնութիւն չեմ գտած առաջին շրջանի խտրութեանց մէջ, որոց վրայ բաց ի Ս. Գրոց՝ ընդհանուր քրիստոնէութեան ազդեցութիւնն ալ նշմարելու ենք: Եւ արդարեւ «Առաքլկ. կանոնք» կ'արգելուն ծանր սպառնալեօք՝ արիւնէն չզատուած միան ու գազանաբեկը: Փանգրեայ ժողովը կը յիշէ հաւատացելոց հրաժարումն «յարենէ եւ ի զոհելոյ կոոց»: Աւրելիանոնի ժողովն Եկեղեցւոյ հաղորդակցութենէն կը զրկէ զոհեալ՝ հեղձուցեալ կամ գազանաբեկ կերողները: Իսկ Տրուզեան ժողովն՝ արիւն կերող կղերականքը պաշտօնագուրկ կ'ընէ: Լատին եկեղեցին արիւն եւ հեղձուցիկ ճաշակելու արգելքը պահեց մինչեւ Թ դար, յորում դադրեցուց. ընդ հակառակն Յոյնք եւ ուրիշ արեւելեայք պահեցին մինչեւ վերջ (վիգ. Ա, 276-7):

Յ. - Բ Շրջան: — Ա. Այս տեղ շատ աւելի բարդ է խտրականութեան սահմանը, եւ շատ աւելի ծանօթ, ըստ որում անով զբաղելու առիթները բազմաթիւ են եղեր, եւ մովսիսական օրինաց ոգին երթալով խորագոյնս թափանցեր է հայ ուղեղին մէջ, ու պղծութեան գաղափարը սաստկապէս տիրապետեր է անոր վրայ: Այս պարագայն շատ զգալի է հետագայ